ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025 թ.

«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԳԵՎՈՐԳ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 47/13-1
Էլ. հասցե՝ directdemocracymonitoring@gmail.com

Ձեր՝ 16.12.2025թ. թիվ 1752494 դիմումին.

Հարգելի Գ. Քոթանջյան

Ձեր դիմումով բարձրացված հարցը քննարկվել է Վանաձորի համայնքապետարանի ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ այլ հասարակական կազմակերպություններ նման բնույթի առաջարկներ չեն ներկայացրել:

Դիմումում ներկայացված մյուս հարցերին Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարը պատասխանել է 16.12.2025թ. թիվ 01/10774 գրությամբ:

Կից Ձեզ եմ ներկայացնում պատասխան գրության կրկնօրինակը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

X _____

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. Իրավաբանական բաժին
Հեռ. /0322/ 4-31-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040, 0322 22648, vanadzor.lori@mta.gov.am

N 01/10774 16 դեկտեմբեր 2025թ.

«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ԳԵՎՈՐԳ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Քոթանջյան

Ի պատասխան Ձեր 02.12.2025թ թիվ 02/259 հարցման.

Հայտնում ենք, որ Վանաձոր համայնքի 2026թ. բյուջեի նախագիծը տեղադրված էր Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական կայքում մինչ հանրային լսումների անցկացնելը և յուրաքանչյուր ոք հնարավորություն ուներ ծանոթանալու և առաջարկություններ ներկայացնելու մինչև հանրային լսման պահը և դրա ժամանակ: Հանրային լսումներից հետո առաջարկություններ կարող են ընդունվել միայն ավագանու անդամների կողմից՝ գրավոր ձևով:

Չնայած վերոնշյալ հանգամանքը Ձեր կողմից կատարված որոշ առաջարկություններ հաշվի են առնվել և փոփոխություններ են մտցվել Վանաձոր համայնքի 2026 թ. բյուջեի նախագծի մեջ, այսպես՝

1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծրագրի

ա)4216 հոդվածի ծախսը 3000.0 հազ. դրամից դարձել է 2000.0 հազ. դրամ /այն ներառում է Խուլերի միավորման հանրակացարանի շենքի վարձակալությունը/

բ)4267 հոդվածի ծախսը 3300.0 հազ. դրամից դարձել է 2000.0 հազ.դրամ

գ)4269 հոդվածի ծախսը 3300.0 հազ.դրամից դարձել է 1000.0 հազ.դրամ

2) «Զբոսաշրջություն» ծախսային ծրագիրը 15000.0 հազ.դրամից դարձել է 10000.0 հազ.դրամ

3) «Շրջակա միջավայրի» աղտոտման դեմ պայքարի ծախսային ծրագրի «Գետերի հուների մաքրումը» 10000.0 հազ.դրամից դարձել է 7000.0 հազ.դրամ

4) «Շրջակա միջավայրի պահպանություն» ծախսային ծրագրի «Շաբաթօրյակների կազմակերպումը» 4000.0 հազ.դրամից դարձել է 3500.0 հազ.դրամ

5) «Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն» ծախսային ծրագրում

ա) «Համայնքի բնակչության պատսպարումն ապահովող ապաստարանների մաքրման և նորոգման աշխատանքները» 15000.0 հազ.դրամից դարձել են 5000.0 հազ. դրամ

բ) «Բարձրահարկ շենքերի վերելակների նորոգումը» 60000.0 հազ.դրամից դարձել է 30000.0 հազ.դրամ

6) «Ջրամատակարարում» ծախսային ծրագրի «Ցայտաղբյուրների համար փականների ձեռք բերում» 3000.0 հազ.դրամից դարձել է 500.0 հազ.դրամ:

Հարգանքով՝

16.12.2025

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Подписано: PELESHYAN ARKADI 2809790434
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

Կատ. Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Վահե Գրիգորյան
+37460650370